9962

|93|

334.7
O-88

2010

LA 27

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(УСТАВ)

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ-ՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ

Библиотека Института Истории Академии Наук СССР

334.7
О-88

52

ԵՐԵՎԱՆ 1931 թ.

2001

334.7
0-88

Պետհրատի Տպարան
Պատվեր 4951
Գլավլիտ 6891
Տիրաժ 10000

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(У С Т А В)

Կոլտնտեսականների յեվ կոլտնտեսականուհիների հասարակական փոխադարձ ոգնության դրամարկղի

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Նպատակ ունենալով զարգացնելու փոխադարձ ոգնությունը կոլտնտեսականների և կոլտնտեսականուհիների մեջ, ամրացնելու գոյություն ունեցող կոլտնտեսությունները և ոժանդակելու բատրակ, չքավոր ու միջակ գյուղացիությանը՝ անցնելու արտադրականության կոլեկտիվ ձևերին, ... գյուղի (կամ գյուղերի) . . . . . գյուղատնտեսական արտելին (կոմունային) կից կազմակերպում է կոլտնտեսականների և

կոլտնտեսականուհիների հատուցական փոխադրության դրամարկղ։

2. Դրամարկղը կազմակերպվում է կամավոր սկզբունքներով՝ կոլտնտեսության իրավասու անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշմամբ ընդունված ժողովին ներկա գտնվող կոլտնտեսության անդամների 2–3-ի ձայներով։ Այդ կերպ վորոշումը ընդունվելուց, կոլտնտեսականների ու կոլտնտեսականուհիների դրամարկղը հիմարվում է կազմակերպված և կոլտնտեսության բոլոր անդամները հանդիսանում են դրամարկղի անդամներ։

50511-ա

Դրամարկղը, ինչպես որենք, կազմակերպվում է յուրաքանչյուր կոլտնտեսության կից, բայց յեթե տվյալ գյուղի խորհրդի տերիտորիայի վրա գոյություն ունեն մի քանի կոլտնտեսություններ, այդ դեպքում կոլտնտեսությունների անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշմամբ կարելի յե կազմակերպել միացյալ դրամարկղ, վորը սպասարկելու յե այդ գյուղի խորհրդի տերիտորիայի վրա

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUR-Арм ССР
Ք. ԿԻՐ. Ա. ԱԼԱՄԴԱՐՅԱՆ
36409-66

գտնվող կոլտնտեսությունների բոլոր անդամներին։

3. Դրամարկղը հանդիսանում է կոլտնտեսականների և կոլտնտեսականուհիների հատուցական ինքնուրույնության կազմակերպություն ու իր բոլոր պարտավորությունների հանդեպ պատասխանում է յուր ամբողջ ունեցվածքով։ Դրամարկղը չի կրում վոչ մի պատասխանատվություն կոլտնտեսության պարտքերի և պարտավորությունների հանդեպ, ինչպես և իր հերթին կոլտնտեսությունը չի պատասխանում դրամարկղի պարտավորությունների ու պարտքերի դիմաց։

2. ԴՐԱՄԱՐԿՂԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։

4. Հատուցական փոխադրության դրամարկղը կազմակերպվում է նպատակ ունենալով ոգնության դալու յուր անդամներին այն դեպքերում, յերբ նրանք զանազան պատճառներով (կոլտնտեսության մեջ աշխատանքի ժամանակ ստացված հաշմության, հղիության և ծննդաբերության, հիվանդու-

թյան; աշխատունակության կայուն և յերկարատև կորուստի, ընտանիքի աշխատողի մահվան դեպքում և այլն) հնարավորություն չունեն մասնակցելու արտոնության մեջ և կարիք են զգում հասարակական ոգնության:

5. Ոգնության տեսակը և չափը, ինչպես և նրա կարգը ու ոգնության ձևերի կանոնները վորոշվում է ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից յելած դրամարկղի միջոցներից և դրամարկղի անդամի կարիքի չափերից:

6. Դրամարկղի անդամի ցույց տված ոգնությունը կարող է լինել բնանյութերով և դրամական նպաստների ձևերով (վերադարձ կամ անվերադարձ), ինչպես և կոլեկտիվ տեսության անդամ հաշմանդամներին աշխատանքի դնելու, նրանց վորակավորելու, աշխատանքային հասարակական ոգնության ձևերի միջոցով և այլն:

7. Դրամարկղը պետք է ոժանդակել բարձրացնելու կոլտնտեսության մեջ աշխատանքի կարգապահությունը ու աշխատանքի արտադրողականությունը:

Դրամարկղը պետք է ոժանդակել բարձրացնելու կոլտնտեսության մեջ աշխատանքի կարգապահությունը ու աշխատանքի արտադրողականությունը:

Դրամարկղը ոգնություն չի ցույց տալիս ցուր անդամներին, վորոնք պարբերաբար կխանգարեն աշխատանքի կարգապահությունը կոլտնտեսության մեջ, անփույթ է վերաբերվում դեպի դույքը, աշխատավոր անասունները, գործիքները, կամ թե անհիմն կերպով կմերժեն տանել կոլտնտեսության մեջ ըստ իրենց ունակության հանձնարարված աշխատանքը:

8. Դրամարկղը պետք է ձգտի, վորպեսզի վոչ մի անդամ իր ֆիզիկական դրությամբ թեկուզ վորյեվե չափով ունենալով հնարավորություն տանելու կոլտնտեսության մեջ ոգտակար աշխատանք չմնա առանց աշխատանքի:

Համեմատ դրան, դրամարկղը ձեռնարկում է այնպիսի միջոցների, վորոնք ուղղված են հաշմանդամների աշխատանքը կոլտնտեսության մեջ լրիվ և նպատակահարմար ոգտա-

գործելուն ու նրանց վերակազմելուն, ինչպես որինակ արտադրական արհեստանոցներ, բանջարանոցներ, մանր տիպի անասնաբուծական ձեռնարկություններ կազմակերպելու և այլն, վորպիսի առաջադրությունները քննության են առնում դրամարկղի և կոլտնտեսության վարչությունները միասին: Նման ձեռնարկների կյանքում կիրառելը տանում է կոլտնտեսության վարչությունը, իսկ դրամարկղը մասնակցում և նրանց իրականացմանը յուր միջոցներով:

Սոցիալական Ապահովության որդոնների հանձնարարություններով դրամարկղը կոլտնտեսության վարչության հետ միասին կոլտնտեսության անդամ հաշմանդամներից՝ կատարում է ընտրություն ուղարկելու նրանց պրոֆ-տեղնիքական դպրոցներ, արտադրական արհեստանոցներ, ձեռնարկներ և արտելներ, ինչպես և աշակերտելու-մասնակցելով անհրաժեշտ դեպքերում յուր միջոցներով այդպիսի ձեռնարկումները իրագործելու համար:

9. Կողմնակի ոգնության կարոտ հաշմանդամներին պահպանելու և տներում տեղավորելու համար, դրամարկղը համաձայնության գալով կոլտնտեսության վարչության (կոլտնտեսությունների վարչությունների) հետ և փոխհամաձայնություն կնքելով հարևան այլ դրամարկղների հետ, կարող է կազմակերպել ու պահել հաշմանդամների և պատանդների համար տներ:

10. Անհրաժեշտ դեպքերում, դրամարկղը յուր անդամներին ցույց և տալիս պրոտեգային ոգնություն համաձայնության գալով այլ առթիվ սոցիալական ապահովության մարմինների հետ:

11. Սոցիալական ապահովության մարմինների հանձնարարությամբ և ի հաշիվ նրանց կողմից հատուկ կատարված հատկացումների, Փոխադարձ Ոգնության դրամարկղը վճարում է թոշակներ դրամարկղի այն անդամներին, վորոնց նշանակված են պետական ապահովություն (գի-վորական հաշմանդամներ, կարմիր բանակը կանչված-ներին ընտանիքներ և այլն):

3. ԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12. Դրամարկղը կազմակերպվում է նրա անդամ հանդիսացող կոլտնտեսականների և կոլտնտեսականուհիների սեփական միջոցներից, որոնք մուծում են մուտքի վճար, որի չափը որոշում է ընդհանուր (պատգամավորական) ժողովը, ինչպես և կոլտնտեսության մեջ կամ նրանից դուրս գտնվող դրամարկղի անդամ յուրաքանչյուր կոլտնտեսականի և կոլտնտեսականուհու տարեկան յեկամուտից տոկոսային որոշ հատկացումներից, որի չափը յուրաքանչյուր տարի որոշում է դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովը:

Բացի այդ դրամարկղի միջոցները կազմվում են.—

ա) Կոլեկտիվ տնտեսության հասարակական ֆոնդից կատարվող հատկացումներից, որի չափը որոշում է կոլտնտեսության ընդհանուր (պատգամավորական) ժողովը համաձայն գյուղատնտեսական արտելի կանոնագրի 11-րդ հոդվածի:

բ) Լուծարքի յենթարկված փոխառարկ

ության գյուղացիական ընկերությունների կողմից հանձնված դրամագլուխներից և ընտանիքներով տրված միջոցներից ու այլ կարողություններից:

գ) Սոցիալական ապահովության մարմինների կողմից հատկացվելիք դրամներից:

դ) Տիրապուրկ, անժառանգ և դատական ու վարչական կարգով բռնագրավված կայքերից, որոնք նախատեսվում են հատուկ որոշումով:

յե) Գյուղական գատարանների որոշմամբ գանձված տուգանումները և

զ) Զանազան այլ յեկամուտներից (նպատակային, հասարակական ցանքեր և այլն):

Ծանոթություն. Դրամարկղի անդամների կողմից կատարած մուծանքները հետ չեն վերադարձվում:

13. Դրամարկղը մուծած միջոցներից կազմվում է պահեստի դրամագլուխ՝ վոչ պակաս դրամարկղի ընդհանուր մուծանքների 5 %-ից:

Պահեստի դրամագլխին կատարվող հատկացումները դադարեցվում են, յեթե այդ

դրամաշնորհը հավասարվում է դրամարկղի տարեկան ծախքերի 30 %-ին։

Դրամարկղի մնացած միջոցները կազմում են գործառնական ֆոնդ, որը ծախսվում է դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից որոշած բոլոր կարգի ոգնություններին համար։

Դրամարկղի դրամաշնորհները և ֆոնդերը ծախսվում են պլանային կարգով ըստ կազմած տարեկան պլանների—հաստատված դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից։

Դրամարկղի բոլոր միջոցները պահվում են պետական վարկային հիմնարկներում և խնայողական դրամարկղներում։

4. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

14. Դրամարկղի անդամ հանդիսանում են 16 տարեկանից բարձր կոլտնտեսության բոլոր անդամները։

Կոլտնտեսության մեջ ընդունված նոր

անդամները միաժամանակ համարվում են դրամարկղի անդամ։

18 տարին չլրացրած անձինք չեն կարող քննարկել դրամարկղի վարիչ և վերահսկիչ մարմինների մեջ։

15. Դրամարկղի մասնակիցները պարտավոր են ժամանակին մուծել դրամարկղն իրենց մուծանքները, հատկացումները և փոխառությունները, կատարել ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից նրանց վրա դրած հասարակական պարտավորությունները և հանձնարարությունները, պահպանել հասարակական կարգապահությունը, հետևել սուրբ կանոնադրության պահանջների կատարմանը և կիրառել ընդհանուր (պատգամավորական) ժողովի, ինչպես և դրամարկղի վարչության որոշումները և կարգադրությունները։

16. Դրամարկղի անդամները, որոնք ժամանակին չեն կատարի իրենց մուծանքները, կամ թե իրենց գործունեությամբ վնաս կհասցնեն դրամարկղի շահերին, դրամարկղի վարչության վորոշմամբ կարող են

յենթարկվել հասարակական ազդեցության միջոցների, կամ թե վորոշ ժամանակով զրկվել դրամարկղի բոլոր, կամ թե վորոշ ձևերի ողնություններից։

Դրամարկղին արվելիք մուծանքները չարամտորեն չկատարող առանձին անձանց վերաբերյալ, յեթե վերոհիշյալ միջոցառումներն անհետևանք կմնան, կոլտնտեսության անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշմամբ մուծանքների դանձումը կարելի յե դնել կոլտնտեսության վարչության վրա կոլտնտեսությունից նրանց հասանելիք վճարումների հաշվին։

17. Փոխողնության դրամարկղի պաշտոնական անձինք իրենց անմատնելավարության, դնելի հանձնարարված աշխատանքներն անվնաս վերաբերմունքի, դրամարկղի միջոցները սխալ ծախսելու և անօրինական այլ արարքների համար պատասխանում են ինչպես օրենական հիմնարկների և ձեռնարկների պաշտոնական անձինք։

18. Խորհուրդներին ընտրական իրավունքով ողտվող դրամարկղի բոլոր անդամ-

ները կարող են մասնակցել դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովներին վճռական ձայնի իրավունքով անձամբ, կամ թե ընտրված պատգամավորների միջոցով, ինչպես և կարող են ընտրել և ընտրվել դրամարկղի վարչ մարմինների, վերատուչ հանձնաժողովի մեջ, և դրամարկղի այլ պաշտոններում։

19. Դրամարկղի անդամները, վորոնք կանչված են Կարմիր բանակի շարքերը, գործուղված են խորհրդային, հասարակական, կոոպերատիվ, կամ թե կուսակցական աշխատանքների, ինչպես և կրթության հիմնարկներ գործուղվածները, կամ թե դրսի աշխատանքի դնացածները մնում են իբր դրամարկղի անդամներ, յեթե նրանք չարտունակում են հանդիսանալ կոլտնտեսության անդամ։

5. ԴՐԱՄԱՐԿՂԻ ՎԱՐԻՉ ՅԵՎ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.

20. Դրամարկղի վարիչ մարմիններն են.— ընդհանուր (պատգամավորական) ժո-

ղովը և դրամարկղի վարչությունը, իսկ վերահսկիչ մարմինն է— դրամարկղի վերատուգիչ հանձնաժողովը:

Ա. Ընդհանուր (պատգամավորական) ժողովը

21. Դրամարկղի անդամների ընդհանուր ժողովը վարում է դրամարկղի գործերը: Եթե ընդհանուր ժողովի հրավիրելը դրամարկղի անդամների շատ լինելու, կամ թե գյուղերի հեռու ընկած լինելու պատճառներով ներկայացնում է վորոշ դժվարություններ, ընդհանուր ժողովը փոխարինվում է (պատգամավորական) ժողովով:

22. Ընդհանուր ժողովը հանդիսանում է դրամարկղը ղեկավարող գերագույն մարմինը, վճռում է դրամարկղի գործունեության կարևոր խնդիրները, մասնավորապես հաստատում է դրամարկղի գործառնական-ֆինանսական պլանները, վորոշում է կոլտնտեսականների և կոլտնտեսականուհիների մուծանքների չափը, ընտրում է վարչության և վերատուգիչ հանձնաժողովի կազմը

և հաստատում է նրանց աշխատանքները վարելու կարգը և կանոնները:

Ընդհանուր (պատգամավորական) ժողովն որինական է համարվում դրամարկղի ընդհանուր անդամների վոչ պակաս կեսի չափով ներկա լինելու դեպքում: Ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշումներն ընդունվում են մեծամասնության ձայնի պարզ և բաց քվեարկությամբ:

Բ. Դրամարկղի վարչությունը

23. Դրամակղի վարչությունը հանդիսանում է դրամարկղի գործադիր մարմինը և վարում է դրամարկղի ամբողջ գործն ընդհանուր (պատգամավորական) ժողովների հրավիրման ժամանակամիջոցում: Վարչության կազմն ընտրվում է ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից մեկ տարի ժամանակով 3-ից վոչ պակաս անդամներով և նրա 1/3-ի չափով թեկնածուներով:

Վարչության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ.ՍՍՀ
ЗАКАВКАЗСКОЙ СФСР
СССР
36404-66

24. Դրամարկղի ընտրության աշխատողները, ինչպես որենք, իրենց պարտականությունները տանում են ճշգրտորեն, սահմանված դեպքերում ընդհանուր (պատգամավորական) ժողովի վորոշմամբ նրանց կարելի չե նշանակել համապատասխան վարձատրություն:

Գ. Վերաստուգիչ հանձնաժողով.

25. Վերաստուգիչ հանձնաժողովն ընտրվում է ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից 3 հոգուց և 2 թեկնածուներով: Վերաստուգիչ հանձնաժողովը վոչ պակաս, յուրաքանչյուր յեռամսյակում մեկ անգամ մանրամասն ստուգում է դրամարկղի վարչության աշխատանքները, մասնավորապես ստուգում է դրամական և բանկային թերթերի մնացորդների պահելու ու ծախսելու ճշտությունը, դրամարկղի կանխիկը և դրամական փաստաթղթերը, ինչպես և քննության է առնում հաշվետու տեղեկագրերն ու դրամարկղի գործունեության պլանները և ներկայացնում է այդ առթիվ իր յեզրակացությունները ընդհանուր (պատգամավորական) ժողովին: Վերաստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի կատարել ստուգումներ ամեն ժամանակ:

Դրամարկղի հիմնական բոլոր ճեվերի գործունեության վերաբերյալ վերաստուգիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություններ, վորոնց պատճեններն ուղարկում է դյուղխորհրդին, կոլանտեսության վարչության և սոցիալական ապահովության շրջանային տեսչին:

Դրամարկղի վարչության, կամ նրա առանձին անդամների կողմից անօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում վերաստուգիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն և հայտնաբերած չարաշահությունների մասին հայտնում է վերևի հիշված մարմիններին, իսկ անհրաժեշտ դեպքերում մոտակա դատական-քննչական մարմիններին:

Վերաստուգիչ հանձնաժողովը հետևում է դրամարկղի ֆոնդերի ճշգրիտ գործածության վրա, համաձայն նրանց նպատակային նշանակումների:

6. ԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

26 Դրամարկղի հաշվետվությունը տարվում է համաձայն այդ առթիվ սոցիալական ապահովության մարմինների կողմից հրատարակած կանոնների:

Դրամարկղի գործունեության հաշվետվությունը վերատուղիչ հանձնաժողովի գործակցության հետ միասին դրամարկղի վարչությունը դնում է դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի քննությանը, նախապես ուղարկելով կոլտնտեսության վարչության և սոցիալական ապահովության շրջանային տեսչին:

Դրամարկղի գործունեության անցած տարվա հաշվետվությունը և ընթացիք տարվա աշխատանքների ֆինանսական-գործառնական պլանը պետք է քննության առնվեն և հաստատվեն դրամարկղի անդամների ընդհանուր (պատգամավորական) ժողովի կողմից նոր տարվա առաջին ամսվա ընթացքում: Այդ նյութերն ընդհանուր (պատգամավորական) ժողովի հրավիրելուց մի քանի

որ առաջ հրապարակվում է— ծանոթացնելու դրամարկղի անդամներին նրանց հետ:

7. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹԱԿԱՆ-ՍՈՑԻԱԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

27 Դրամարկղի անդամների կուլտուրական սոցիալ-կենցաղային կարիքների ոստստարկումը բարելավելու նպատակով, դրամարկղն ամեն կերպ ոգնում է ու ոժանդակում կոլտնտեսությանը տանելու միջոցառումներ՝ ուղղված աշխատանքի և կենցաղի բարելավմանը և առողջացմանը, կազմակերպելու մանկամսուրներ, ծննդկանին ոժանդակող տներ, մինչ դպրոցական հիմնարկներ, հասարակական սննդի կայաններ և այլն:

8. ԴՐԱՄԱՐԿՂԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ.

28. Դրամարկղի աշխատանքները կոլտնտեսության աշխատանքների հետ համաձայնեցնելու նպատակով, դրամարկղի աշխատանքների պլանը մինչ դրամարկղի անդամների ընդհանուր ժողովի քննության դնելը, համաձայնեցվում է կոլտնտեսության վարչության հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դրամարկղի վարչության մեջ անպայման մտցվում է կոլտնտեսության վարչության անդամներից մեկը:

29. Դրամարկղն իրագործում է իր անելիքները գյուղական խորհրդի անմիջական ղեկավարության և հսկողության ներքո և սոցիալական ապահովության համապատասխան մարմնի ընդհանուր ղեկավարության և վերահսկողության ներքո:

9. ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ (ՈՒՍՏԱՎԻ) ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

30. Դրամարկղի կանոնադրությունը (ուստավը) գրանցվում է սոցիալական ապահովության շրջանային տեսչի կողմից, իսկ նրա բացակայության դեպքում, շրջանային գործադիր կոմիտեի կողմից:

Դրամարկղը գրանցման յենթարկվելու մոմենտից նա ստանում է իրավական անձի իրավունքներ:

31. Դրամարկղն ունի յուր անվանի կնիքը:

32. Դրամարկղի գրանցման գործը, դրամարկղների միացման պայմանները (կետ 2-րդ) և այլ խնդիրներ, վորոնք կապված են կոլտնտեսականների և կոլտնտեսականուհիների հասարակական փոխադնության դրամարկղների կազմակերպման հետ, վորոշվում է առանձին կանոններով, վորը հրա-

54.
Ամ 21
ԲՊԱ 32-11/27

տարակվում և Սոցիալական Ապահովության ժողովրդական Կոմիսարիատի կողմից՝ համաձայնեցրած Կոլտնտակենտրոնի հետ։

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի
տեղակալ՝ Ա. ՑԵՐԶՆԿՅԱՆ

ժողկոմխորհի գործերի կառավարիչ՝
Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԵՏ ԱՆ ՀՐ. ԴՍՐՅԱՆ
ՀՍՍՌ-Ական ՍՍՀ
Ս. ԱՄ ▲ ԱՐՇԱՄՈՎԱ
Ս. ՍՍԱՍ ՀԱՅԻ ՍՆՎԱՆ

7013
<< Ազգային գրադարան
NL0044647
9962